

Նկ. 4 Թագուհի Մելիք-Բեգլարեանների տապանաքարը

Նկ. 5 Շահմիր Մելիք-Բեգլարեանների տապանաքարը



Նկ. 6 Վարդենի Մելիք-Բեգլարեանների տապանաքարը

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Միսաք Հ. Ճեւահիրճեան

Հայոց վերջին պետութիւնը հիմնուել էր Հայաստանից հեռու, Կիլիկիայի լեռնային տարածքում 1080 թ., «սասնեցի Ռուբէն իշխանի գլխաւորութեամբ: Ռուբէնի հաստատած իշխանութիւնը իր անունով էլ կոչուել էր «Ռուբինեան իշխանութիւն»: Օտարազգիները, յատկապէս եւրոպացիները այն անուանում էին «Լեռների իշխանութիւն»: Մէկ դարից քիչ աւելի ժամանակաընթացքում, հայերը՝ իջան լեռներից եւ գրաւեցին բովանդակ Կիլիկիան ու յարակից տարածութիւնները: 1190 թ-ին Սրբազան Հռոմէական կայսրութեան Ֆրեդերիկ 1-ին Շիկամորուս (1152-1190 թթ.) կայսեր երրորդ խաչակրաց զօրքը, երբ հասել էր Սնովրոս լեռների ստորոտը, Ռումի Սելջուկների աւագանին նրան խորհուրդ էր տուել. «Հայերի մեծ իշխան Լեւոնը, եթէ ուզենայ թողնել, ապա դուք կը կարողանաք անցնել այս կիրճերը եւ շարունակել ձեր ճանապարհը: Հակառակ դէպքում անհնար է անցումը նրա երկրի մէջով»: Ռուբինեան Մեծն Լեւոն II իշխանից, Գրիգոր Դ. Տղա կաթողիկոսից, Ներսէս Լամբրոնացի եպիսկոպոսից, Սելեւկիայի տէր Շահնշահ եւ Միսիսի տէր Հեթում Սասնեցի եղբայր իշխաններից ու այլ պատգամաւորներից բաղկացած պատուիրակութիւնը, Ֆրեդերիկ I Շիկամորուսի հետ բանակցութիւնների ժամանակ, կայսրը եկել էր այն համաձայնութեան, որ Հայոց օժանդակութեան փոխարէն նա Լեւոն II-ին թագադրի «Թագաւորական թագով»: Երկու օր անց, կայսրը Սելեւկիայում խեղդուեց գետում: Նրա հետ եղող որդին՝ Ֆրեդերիկ դը Սուաբն էլ հիւանդանալով մահացաւ Աքքայում, Երուսաղէմի ճանապարհին: Ցրուեց Երրորդ խաչակրաց բանակը եւ անյաջողութեան հանդիպեց արշաւանքը:

1193 թ-ին մահացան Գրիգոր IV Տղայ (1173-1193 թթ.) կաթողիկոսը, Սասնեցի Զորտուանել իշխանի վերոյիշեալ Շահնշահ եւ Հեթում որդիները: Կարծես թէ Լեւոն II-ի թագի նկատմամբ առկայ պահանջարկը մատնուել էր մոռացութեան: Սակայն չէր քնած դիւանագիտութիւնը: Բիւզանդիայի Ալեքս I Անգելոս (1195-1203 թթ.) կայսրը, սրբազան Հռոմէական կայսրին եւ Հռոմի Պապին կանխելու նպատակով, Ռուբինեան Լեւոն II իշխանին ուղարկեց թագաւորական թագ, իր յարակից մանրամասներով միասին: Միջնադարեան եւ արդի գրաւոր աշխատութիւններով, Բիւզանդական թագի ստացման թուականի մասին կան իրար հակասող տեղեկութիւններ: Այդ եղելութեան մասին հետեւեալն է գրել Սմբատ Սպարապետը (1208-1276 թթ.).

«Իսկ ի թուին ՈՄԵ (645=1196 թ.) առաքեաց թագաւորն Յունաց Լեւոնի թագ պատուական, եւ խնդրէ ի նմանէ զմիաբանութիւն սիրոյ. եւ նա առ ընկալաւ ուրախութեամբ»:

Ըստ միջնադարի պատմագիր Կիրակոս Գանձակեցու (ԺԳ. դ.) եւ Յովհան Դարդելի (ԺԴ. դ.) տեղեկութիւնների, բիւզանդական թագը ստացուել էր իբր գերմանականից (Սրբազան Հռոմէական կայսրութիւն) յետոյ: Սակայն դա թիւրիմացութիւն է: Ինչպէս յայտնի է Լեւոն Մեծագործը թագադրուել էր երկու օտար

© National Library of Armenia

կայսրերի կողմից ուղարկուած առանձին թագերով: Գրաւոր յիշատակութիւնների եւ ակնարկների տրամաբանական վերլուծութիւնից դատելով, կարելի է ասել, որ Բիւզանդական թագի ստացումից յետոյ կատարուել էր թագադրութեան նախնական մի արարողութիւն: Դրա մասին է յուշում 1198 թ-ին Կիլիկիայի Գեմուռգեր վայրում գրուած եւ Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 989 ձեռ. մատեանի յիշատակարանի հետեւեալ տողերը. «... ի Ոխ եւ եւթեանց (1198), ..., ի թագաւորութեանն Հայոց բարեպաշտ եւ քրիստոսապսակ արքային Լեւոնի, որ է յաղթող եւ ահաբեկու ի վերայ թշնամեաց խաչին Յիսուսի...»: Դրանից առաջնորդուելով կարելի է ասել, որ Լեւոն Մեծագործին «Քրիստոսապսակ արքայ» յորջորջելու համար, անկասկած նրա առաջին թագադրութիւնը տեղի ունեցած պիտի լինէր 1196 եւ 1198 թուականների միջեւ: Արդէն դա հաստատւում է Սմբատ սպարապետի հետեւեալ տողերով. «Ի թուին ՈՒԶ (646=1197 թ.) առաքէ Լեւոն ի Կոստանդնուպոլիս զարքեպիսկոպոսն տէր Ներսէս, զորդի Օշնին, եւ զմեծազարմ իշխանն զՀալկամն, զեղբայր Բակուրնայ՝ զքեռին իւր, որք գնացեալ անդ եւ ցուցեալ զկամս սիրոյ Լեւոնի յօժարութեամբ առ նոսա»: Լեւոն Մեծագործի նախ Բիւզանդական թագով թագադրուելու իրողութիւնը հաստատւում է 1198-ին Հռոմկլայում Ստեփանոս Տիրացուի գրած յիշատակարանի յետեւեալ տողերով. «...Լեւոնը ... ստացաւ զաւգոստական զծիրանափայլ պատմուճանն եւ ընկալաւ աւծումն որպէս զմեծն Տրդատ, կամակցութեամբ արիական ազգին Յունաց, բերեալն նմա զխաչանիշ թագն: Եւ նորա պատուասիրաբար կոչեցեալ զհոգեւոր տէր Գրիգորիոս [IV Ապիրատ, 1194-1203 թթ.], զի երթիցէ եւ աւծցէ զնա սրբարար եւ մաքրագործակ մեռոնաւն եւ պսակեսցէ զգլուխն. խաչանշան դրոշմաւ»: (Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 442):

Ինչպէս պարզւում է, Բիւզանդական թագով թագադրուելուց յետոյ Լեւոն Մեծագործը, Կոստանդնուպոլիս էր ուղարկել Տարսոն քաղաքի առաջնորդ եւ Սկեւռայի վանահայր Ներսէս Լամբրոնացի արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ մի պատուիրակութիւն, որի նպատակն էր ծանօթանալ թագի առաքման հետ առնչուող պայմանների հետ: Կոստանդնուպոլսում՝ երկարատեւ բանավէճերի հիմնական թեման եղել էր Հայոց Առաքելական սբ. Եկեղեցու միաւորումը Բիւզանդական եկեղեցու հետ, որը չէր յանգել ոչ մի դրական արդիւնքի:

Շուրջ 800 տարի առաջ, նոյն 1197 թուականին, Լեւոն Մեծագործը Պաղեստինի ծովեզերեայ Աքքա քաղաքն էր ուղարկել Սիսի առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոսին, որպէս «... ի խնդիր թագին, զոր թագաւորն Ալամանաց առաքեալ էր նմա, զկնի զօրացն, որ եկեալ էին անդ, որ եւ եկն անտի արծուէսքն, որ եկեալ էր հրամանաւ պապուն Հռոմայ»: (Սմբատայ Սպարապետի տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 207-208: Արծուէսք =archevêque, արքեպիսկոպոս): Խօսքը վերաբերում է Ֆրեդերիկ I Շիկամօրուս կայսեր 1190-ին Լեւոն II-ին խոստացած թագին: Տարիներ էին անցել: Նրա որդին, Հենրիխ IV կայսրը յարգեց հօր խոստումը եւ IV խաչակրաց արշաւանքին մասնակից զօրքի հետ միասին Աքքա էր ուղարկել Լեւոն Մեծագործի պահանջած թագը, որպէսզի այնտեղից փոխադրուի Կիլիկիա: Ըստ Աքքայում կայացած որոշման, Լեւոն Մեծագործի գերմանական թագով թագադրութիւնը պիտի կատարուէր 1199 թուականի Յայտնութեան Տեառն տօնին,

այսինքն յունուարի 6-ին, Սուրբ Ծննդի օրը: Այդպիսի սովորութիւն կար լատինների մօտ, որ առաջին անգամ «Թագաւորութեան» տիտղոսի տուչութեան արարողութիւնները կատարուեն «Յայտնութեան Տեառն տօնի» օրերին: Այդպէս էր եղել Երուսաղէմի առաջին Լատին թագաւոր՝ Բոդուին I Բուլոնիացու (Baudouin I de Boulogne, 1100-1118 թթ.) նկատմամբ: Նա՝ Բեթլեհէմում 1100 թուականի սուրբ Ծննդեան (Noel, դեկտ. 25) տօնի օրը, հանդիսաւոր արարողութեամբ տաճարում թագադրուեց եւ կոչուեց «Բոդուին I, թագաւոր Երուսաղէմի»:

Լեւոն Մեծագործի Գերմանական թագով էլ երկրորդ անգամ թագադրումը կատարուել է որոշուած թուականին, Տարսոնի սուրբ Սոփի տաճարում, մեծաշուք եւ հանդիսաւոր արարողութեամբ: Մասնակիցների թւում բիւզանդացիների, ասորիների, լատինների եւ հայերի բազմաթիւ բարձրաստիճան հոգեւոր առաջնորդներից բացի, ներկայ էին նաեւ հայ եւ օտարազգի իշխաններ, շրջակայ քրիստոնեայ եւ մահմեդական պետութիւնների տիրակալների ներկայացուցիչներ եւ դեսպաններ: Թագադրութեան հանդէսի խրախճանքը տեւել է 10 օր: 1199 թուականին յունուարի 6-ին Լեւոն Մեծագործը թագաւոր օծուեց Սրբազան Հռոմէական (Գերման) կայսեր թագադիր, կայսրընտիր (kürfürst) եւ Գերմանիայի Մայանս քաղաքի արքեպիսկոպոս-իշխան Կոնրադ Վիտելսպախի եւ Հայոց Գրիգոր IV Ապիրատ կաթողիկոս միասին ձեռնադրութեամբ եւ այնուհետեւ Լեւոն Մեծագործը հռչակուեց «Կիլիկիայի Հայկական պետութեան առաջին թագաւոր»: Հենրիխ VII կայսրը ադամանդակուռ եւ խաչանիշ թագի եւ հանդերձանքի հետ միասին ուղարկել էր նաեւ Ֆլոտռիս (կամ Ծաղիկ) կոչուով գայիսոն, սուսեր, առիւծանշան դրօշ, զինանշան, մահմէդ (ձիու խթան), թամբ, չաղղէր (տապատ), գահ, թիկնոց երկարաճիտ կարմիր կօշիկներ եւ այլն:

Այս յօդուածի նպատակն էր ճշտել Լեւոն Մեծագործի թագադրութիւնների թուականները: Միջնադարեան գրաւոր աղբիւրներում եւ արդի բանասէրների երկերում Բիւզանդական թագով թագադրութեան թուականը տատանւում է 1196 թ. յունուարի 31-ից մինչեւ 1198 թ. յունուարի 31-ի միջեւ եղած ժամանակաշրջանին: Ուստի այդ իրադարձութիւնը կատարուած պէտք է լինի 1197 թուականին:

Իսկ գերմանական թագով Տարսոնի «սուրբ Սոփի Մայր տաճարում կատարուած մեծաշուք թագադրութեան թուականն էլ տատանւում է 1198 (ՈՒԷ=647) եւ 1199 թուականների միջեւ: Պատմական եղելութիւններից յայտնի է, որ արքեպ. Ներսէս Լամբրոնացին մահացել էր 1198 թ. յուլիսի 14-ին եկեղեցիում պատարագելիս: Այդ պատճառով էլ նա չէր մասնակցած Լեւոն Մեծագործի երկրորդ թագով թագադրութեան արարողութեանը: Պէտք է հաշուի առնել, որ Հայոց Մեծ ՈՒԷ (647) սկսւում էր 1198 թ. յունուարի 31-ին (Նաւասարդի 1-ի) օրով եւ վերջանում 1199 թ. յունուարի 31-ին: «ՈՒԷ թուականի յամսեան Յունուարի, յաւուր Յայտնութեան Տեառն» օրը համապատասխանում էր 1199 թ. յունուարի 6-ի սբ. Ծննդեան տօնին (տե՛ս Բ. Ե. Թումանեան, Առձեռն տոմարացոյց, Երեւան, 1965, էջ 20, 30-32): Այդ օրը պաշտօնապէս ճանաչուել է իբր Լեւոն Մեծագործի «Թագաւոր» եւ Կիլիկիայի Ռուբինեան իշխանութիւնն էլ «Հայոց թագաւորութիւն» հռչակուելու թուական: Ուստի Կիլիկիայի Հայկական թագաւորութեան հաստատման թուականն էր 1199 թ. յունուարի 6-ը:

© National Library of Armenia

Լեւոն Ի Մեծագործը թագաւոր օծուելուց յետոյ ընկալեց Լէօ անունը: Կարմիր թանաքով ստորագրում էր +Leo թագաւոր հայոց: Անունը լինում էր լատինատառ, իսկ «Թագաւոր Հայոց»-ը՝ մեսրոպատառ:

Տարսոնի ս. Սոփի Մայր տաճարը սկզբում եղել էր Բիւզանդական կառոյց: Արաբները Կիլիկիան գրաւելուց յետոյ այն վերածել էին մզկիթի եւ նոյնիսկ 833 թ. Կուկլակի կիրճի Թելուկ (այժմ՝ Անաշա կալէ) բերդում մահացած Մամուն խալիֆային թաղել էին տաճարի բակում: Տարսոնը մի քանի անգամ արաբների եւ բիւզանդացիների միջեւ տուրեւառի ենթարկուելուց յետոյ, ս. Սոփին վերստին վերածուել էր բիւզանդական տաճարի: Հայերը Տարսոնին տիրելուց յետոյ, սբ. Սոփին եւս անցել էր նոր տէրերի ձեռքը: 1275 թ-ին Եգիպտոսի մամլուկ Բայբարս սուլթանը հրկիզել էր ս. Սոփի տաճարը: Քիչ ժամանակ անց վերանորոգուել էր տաճարը եւ Հեթում II-ի եղբայր Օշին իշխանը Տարսոնի Մայր տաճարում թագաւոր էր օծուել (1308թ.):

Միջնադարեան Տարսոնի ս. Սոփի Մայր տաճարի տեղում այժմ գտնւում է Ուլուճամի կոչուող գեղեցիկ եւ վեհաշուք մզկիթը: Դա՝ գործող մզկիթ է եւ կառուցուած է Տարսոնի (այժմ՝ Թարսուս) կենտրոնական մասում: Կիլիկիայի Հայկական թագաւորութիւնը անկում կրելուց (1375 թ.) յետոյ, որոշ մի ժամանակ անց մինչեւ յատակը քանդուել են տաճարի պատերը եւ նրա տեղում կառուցուել է Ուլու-Ճամի մզկիթը: Հայոց տիրապետութեան շրջանի սուրբ Սոփի տաճարը կառուցուած էր բազմաստիճան որմնախարիսխի վրայ: Դրա հարաւի եզրը դուրս է մնացել Ուլու-Ճամի մզկիթի հարաւային ճակատի պատի տակից եւ այժմ երեւում է փողոցի մայթի եզերքից: Անտեղ պարզ կերպով նկատւում է տաճարի եւ մզկիթի երկայնական առանցքների ուղղութեան տարբերութիւնները:

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Կ. Ն. Իւզբաշեան, Հայագիտութեան ներածութիւն. Ուսումնական ձեռնարկ, Ս. Պետերբուրգի համալսարանի հրատարակչութիւն, 2003

К. Н. Юзбашян, Введение в арменистику. Учебное пособие, Издательство С.-Петербургского университета, 2003

Սկսնակ արեւելագէտ-հայագէտներին հասցէագրուած այս համառօտ ձեռնարկը (64 էջ) գրուել է Ս. Պետերբուրգի համալսարանի Արեւելագիտութեան ֆակուլտետում մի քանի տարի առաջ վերաբացուած կարճաժամկէտ դասաւանդման բաժնի (որտեղ կան նաեւ հայոց լեզուի, պատմութեան եւ մշակոյթի դասընթացներ) ուսանողների համար: Բարձր մասնագիտական մակարդակով եւ մատչելի շարադրանքով այն հայագիտական առարկաներին դեռեւս անծանօթ ուսանողի համար կողմնորոշուելու հիանալի գործիք է:

Հայագիտութիւնը Իւզբաշեանը դիտում է բառիս նեղ՝ դասական արեւելագիտութեան եւ բիւզանդագիտութեան հետ առնչուող առարկայի իմաստով, որպէս դասական հայերէնով՝ գրաբարով գրուած յուշարձանների եւ դրանցում արտայայտուած պատմական իրականութեան ուսումնասիրութիւն:

Ձեռնարկը չի յաւակնում ամբողջովին նորարարական լինելու. որպէս նրա նախատիպեր, ճիշտ է, նիւթի եւ հայերէն ու ռուսերէն գրականութեան աւելի սահմանափակ ընդգրկումով, Իւզբաշեանը նշում է հետեւեալ աշխատութիւնների համապատասխան բաժինները՝

Assfalg J., Krüger P., Petit dictionnaire de l'Orient Chrétien, Brepolis, 1991 (թարգմանություն գերմաներէնից՝ Kleines Wörterbuch der Christlichen Orient, hrsg. von J. Assfalg, in Verbindung mit P. Krüger, Wiesbaden, 1975),

Albert M. e. a., Christianismes Orientaux. Introduction à l'étude des langues et des littératures. Initiation au christiannisme ancien, Paris, 1993:

Ձեռնարկի ներածական բաժինը հայ ժողովրդի պատմութեան սեղմ (էջ 6-19) ակնարկ է, որի վերջին (17-19) էջերը նուիրուած են հայկական սփիւռքին:

Հիմնական չորս բաժիններից առաջինը՝ «Հայոց լեզուաբանութեան հիմունքներ», տեղեկութիւններ է պարունակում հայերէնի ծագման, ուսումնասիրման պատմութեան, գրաբարի, միջին հայերէնի, արդի երկու գրական լեզուների մասին՝ կարեւորագոյն ընդհանուր հետազօտութիւնների, դասագրքերի եւ բառարանների թուարկումով: Երկրորդ՝ «Հայկական ձեռագրեր եւ վիմագրութիւն» բաժինը ծանօթացնում է գրերի գիւտի պատմութեանը, հայերէն այբուբենին, գրչութեան տեսակներին, վիմական արձանագրութիւնների առանձնայատկութիւններին, ձեռագիր մատեանների արտաքին նկարագրութեանը:

Այս համառօտ՝ ընդհանուր տեղեկութիւններ պարունակող բաժիններին յաջորդող երրորդ՝ «Ձեռագրերի ուսումնասիրութիւն, տեքստի որոշում եւ հրապարակում» բաժինը գործնական եւ անկաշկանդ զրոյց է ապագայ հայագէտի հետ: Նրանում շարադրուած են ձեռագրերի ու-

© National Library of Armenia